<ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ>

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ООО "МАРА ЕВ ДУСТРЕР"

«MARA EV DUSTRER» LLC

*1/3,P.Buzandi str., Yerevan*
*Tel: (+374-93) 740 411,*
(+374-91) 569476

*Երևան, Փ.Բուզանդի փող.,1/3*
*գործ. հասցե Քոչարյան 16, բն.1*
*Հեռ՝ (+374-93) 740 11,* (+374-91) 569476
*maraevdustrer@gmail.com*
*mgusnyan@mail.ru*

***Ереван, П Бузанди***
*Тел: (+374-93) 740 411*
(+374-91) 569476

N Ք- 13 03,03, 2026թ.

Կապանի համայնքի ղեկավար
Պ-ն Գ. Փարսյանին

«ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ» ԱՁ
Տնօրեն՝ Ա.Խաչատրյանին

Դիտարկելով ՀՀ Սյունիքի մարզ, Կապան համայնք ք. Կապան Գ.Նժդեհի հուշարձանի հարակից տարածքի բարեկարգման» աշխատանքային նախագիծը՝ «Մառա և դուստրեր» ՍՊ Ընկերությունը երաշխավորում է դրանց համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքը կազմել է՝ 77299,7 հազ.դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Առդիր՝ փորձաքննության եզրակացություն 3 էջից

Տնօրեն՝ Մ.Հուսնյան

«МАРА ЕВ ДУСТРЕР» «MARA EV DUSTRER» 02700688

«ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
(Պետ լիցենզիա N 000165)

Հաստատում եմ՝
03.03.2026թ.
«Մառա և դուստրեր» ՍՊԸ-ի տնօրեն

Մ. Հունյան

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ըստ ՀՀ Սյունիքի մարզ, Կապան համայնք ք. Կապան Գ.Նժդեհի հուշարձանի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքային նախագիծ

**Պատվիրատու՝**
Կապանի համայնքապետարան

**Նախագծող՝**
«Աննա Խաչատրյան ԱՁ
«Ճանշին նախագիծ
և դիզայն» ՍՊԸ
ՔՊԼ-000408
ՃԲԴ-Ա-0221

Նախագծման հիմք են ծառայել.

- Տեխնիկական հիմնավորում և բնութագիրը
- Նախագծման թույլտվությունը **ՆԹ-1102-26 04.02.2026թ. /PM84-BA5A-D65A-175F/**

Կապանի Գ. Նժդեհի հուշարձանի հարակից տարածքը գտնվում է համաչափ, հավասարաչափ թեքություն ունեցող ռելիեֆի վրա: Գ. Նժդեհի հուշարձանի հարակից պուրակի բարեկարգվող տարածքը կազմում է մոտ 2200.0 քմ: Նախագծով նախատեսվում է կատարել այգու ընդհանուր բարեկարգում, փոխարինել առկա լուսավորության կանգնակները, Նժդեհի խոսքերով տեղեկատվական առկա վահանակների փոխարինում նոր լուսավորվող վահանակներով, նոր նստարանների և աղբամանների տեղադրում, հենապատի ամրացում տորկրետացման եղանակով, դրա ետևում իրականացվելու են դրենաժային հորատանցքեր, արտաքինից հենապատը երեսպատվելու է բազալտե հղկված սալիկներով 300x30 մմ:

Բարեկարգման աշխատանքների իրականացման համար նախատեսվում է քանդման աշխատանքներ.

Գոյություն ունեցող մետաղական էլեմենտների ապամոնտաժում և պահեստավորում:

Ճեմուղիների հատակի ասֆալտբետոնե և տոմետե շերտերի և բազալտե հատիկավոր աստիճանների քանդում:

Այգու տարածքում գոյություն ունեցող նստարանների, լուսատուների, աղբամանների ապամոնտաժում և պահեստավորում,

Բազալտե և բետոնե եզրաքարերի մասնակի քանդում, հիմքերի հետ միասին:

Առկա ծառերի և թփերի հանում, տեղափոխում և վերատեղադրում՝ արմատային համակարգի պահպանմամբ:

Հենապատի երեսպատման բազալտե սալիկների և թասակի քանդում:

Բարեկարգման աշխատանքների մեջ մտնում են.

Այգու ռելիեֆի թեքությունները պահպանելով՝ ճեմուղիների համահարթեցում, նոր հատակի իրականացում տոմետե, տրավերտինե և բազալտե սալիկներով՝ համաձայն նախագծի:

Նոր բազալտե եզրաքարերի տեղադրում և լավ վիճակում գտնվող եզրաքարերի վերատեղադրում, կուտակված բուսահողի փռում սիզամարգերում համահարթեցում,

կանաչապատ տարածքների պարագծով սամշիթ տեսակի բույսի տնկում, հանված ծառերի և թփերի վերատեղադրում:

Նոր նստարանների, լուսատուների, աղբամանների տեղադրում, Գ. Նժդեհի խոսքերով մետաղական հիմնակմախքով լուսավորվող տեղեկատվական ցուցանակների տեղադրում:

Մետաղական ճաղավանդակի փոխարինում նորով, այգու գլխավոր մուտքի հատվածում նախատեսվում է մեխանիկական անցագրային պտտվող սարքի (տուրնիկետի) տեղադրում՝ մուտքի և ելքի կազմակերպման և մարդկանց հոսքի կարգավորման նպատակով:

Կանաչապատ գոտիներում նախատեսված է անձրևացման եղանակով ավտոմատ ոռոգման համակարգ:

**Պուրակի լուսավորության էլ. սնուցումն** նախատեսվում է իրականացնել այգու տարածքին հարակից տեղադրվող լուսավորության վահանակից:

Լուսավորության վահանակի էլ. մատակարարումը իրականացվում է տարածքում գտնվող ուժային արկղից՝ ՎՎԳ 5x2.5մմ² կտրվածքի մալուխով:

Լուսավորության վահանակից առանձին խմբերով իրականացվում է տարածքում տեղակայված լուսատուների 0.22 կՎ էլ. սնուցումը:

Արտաքին լուսավորության հենասյուների վրա տեղադրվող 18վտ հզորության LED լուսատուների սնուցման ՎՎԳ 5x2.5մմ² կտրվածքի մալուխները դուրս գալով լուսավորության վահանակից ստորգետնյա մալուխագծով շարունակվում են մինչև նոր տեղադրվող մետաղական հենասյուն, որտեղ կատարվում է ճյուղավորում մինչև այդ հենասյան վրա տեղադրված լուսատու: Ճյուղավորման համար հենասյան վրա գետնից 0.5մ բարձրության վրա նախատեսվում է տեղադրել ճյուղավորման տուփ: ճյուղավորվելով առաջին հենասյուններից մալուխները խրամուղով շարունակվում են մոնտաժվել նոր տեղադրվող հենասյուներ՝ կատարելով նմանատիպ ճյուղավորումներ դեպի այդ հենասյուների վրա տեղադրված լուսատուներ:

Նշված լուսատուների սնուցման ՎՎԳ 3 x1.5 մալուխների երկարությունը հաշվարկված է՝ հաշվի առնելով լուսատուների տեղադրման բարձրությունը 3մ:

Նախագծով նախատեսված է նաև յուրաքանչյուր ուղղության 18վտ LED լուսատուների ծայրային մետաղական հենասյուններէ հողանցում, որի համար ծավալաթերթում նախատեսված են շերտավոր պողպատ ( Б 40x4մմ) և անկյունակներ (50x50x5մմ):

Խրամուղու մեջ մալուխները տեղադրվում են հողից 0.7մ խորության վրա՝ ծածկելով ավազով և ավազակոպիճով: Բոլոր մալուխները տեղադրվում են պաշտպանված երկպատ (հատուկ մալուխների համար) ճկախողովակով՝ մեխանիկական հարվածներից խուսափելու համար:

Մալուխը խրամուղում տեղադրվում է օձաձև՝ մեխանիկական լարումներից և ջերմային դեֆորմացիաներից խուսափելու համար:

Մալուխի թեքման կորի ներքին շառավիղը պետք է լինի ոչ պակաս, քան մալուխի տրամագծի 15- պատիկը:

**Սպրինկլերային ոռոգման** համակարգը նպատակաուղղված է կանաչ տարածքների հավասարաչափ և արդյունավետ ոռոգմանը: Համակարգը նախագծված է՝ հաշվի առնելով ագրոտեխնիկական պահանջները, տեղանքի ռելիեֆի առանձնահատկությունները, ինչը երաշխավորում է խոտածածկի աճի համար օպտիմալ պայմաններ: Նախագծի շրջանակներում նախատեսվում է բարձրորակ սարքավորումների օգտագործում, ներառյալ՝ սպրինկլերներ, կցամասեր, սարքավորումներ և խողովակաշարեր, որոնք ընտրված են համակարգի երկարաժամկետ և հուսալի շահագործումն ապահովելու համար:

Համակարգի ավտոմատացումը հնարավորություն է տալիս ճշգրիտ կարգավորել ոռոգման ինտենսիվությունն ու ժամանակը, ինչը նպաստում է ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և շահագործման ծախսերի նվազեցմանը:

Ներկայացված նախահաշվային արժեքն է՝ 76778,0հազ.դրամ, ներառյալ ԱԱՀ:

Աշխատավարձի անցումային ինդեքսը՝ 2467.79 և

Մեք. շահագործման ինդեքսը՝3057.60:

Նյութերի արժեքը հաշվարկված է 2025թ. նոյեմբեր ամսվա "Ինֆորմացիոն տեղեկագրով":

Տրանսպորտային ծախսերը հաշվարկված են 1,129:

Ամփոփ նախահաշվում հաշվի են առնված հետևյալ ծախսերը՝

- Ժամանակավոր շենքերի և շինությունների ծախսեր – 0,75%
- Ձմեռային թանկացումների ծախսեր –0,4%
- Փոքր ծավալի շինմոնտաժային խատանքների համար – 1,0%
- Ոչ ընթացիկ աղբի տեղափոխում -0,15%
- Հեղինակային հսկողության ծախսեր - 0.6 %
- Տեխնիկական հսկողության ծախսեր – 1,8%
- Չնախատեսված ծախսեր – 3 %

**Դիտարկելով ներկայացված նյութերը փորձաքննությունը նշում է՝**

Հատակագծային լուծումների վերաբերյալ եղած դիտողությունները քննարկվել են նախագծողների հետ և կատարված են ուղումներ:

**Էլեկտրատեխնիկական մասի վերաբերյալ**

1.ԷՏ-02 թերթի վրա բերված սխեման լրացնել ղեկավարման տարրերով-կոնտակտոր, կոճակներ, մեռնաշաղային ռելե, ժամանակի ռելե-կապված ընտրված ղեկավարման սկզբունքից:

**Նախահաշվային մասի վերաբերյալ**

Լոկալ նախահաշիվ 1-1

1,կետ63 բիտումե էմուլսիայի գինը ընդունել 165,0 հազ դրամ

2 կետ.82,87 բազալտե սալիկների տակ ե/բ հիմնատակի իրականացում կիրառել 6-86 և6-1 հիմնավորումները,6--16 հիմնավորումը նախատեսված է ե/բ հիմնային սալի համար

3,Կետ 94 գրառման մեջ ավազի փոխարեն կիրառել ցեմենտ ավազե խառնուրդ բառերով

4,Կետ 105 գրառման մեջ նշված բնական կլոր քարեր, իսկ նյութածախսում գրված է բետոնե քարեր, եթե բնական քարեր են նշել բացի h-50մմ-ից նաև մյուս չափերը և ընդունել կամ 1,5, կամ 3,0 հազ դրամ

5,կետ 142,154 h-50մմ բազալտե թասակը ընդունել 12,5հազ դրամի փոխարեն 60 հազ դրամ

6,Կեռ186,189 հիմնավորել ցուցանակների գինը 400,0, 450,0 հազ դրամը, /ներկայացված է հիմնավորում և համաձայնեցված է պատվիրատուի հետ/

7,կետ 204,244 և մյուս տեղերում 15--28 հիմնավորումները փոխարինել 10--28 հիմնավորումներով

8,կետ 298, բոլոր տեղերում անցքերի ներարկումը պոլիմերցեմենտային շաղախով 11--11 հիմնավորումը փոխարինել 35—3757 հիմնավորումով

Լոկ նախահաշիվ 1-3

1,կետ 47,48 Հիմնավորել 45վտ 22վտ գինը 150,0,85,5 հազ դրամ

Առանձնացնել վահանակները որպես սարքավորումներ:

Դիտարկման ընթացքում եղած դիտողությունները և առաջարկությունները քննարկվել են նախագծողների հետ և կատարվել են համապատասխան նախագծային ճշտումներ:

**Եզրակացություն՝** Երաշխավորվում է ՀՀ Սյունիքի մարզ, Կապան համայնք ք. Կապան Գ.Նժդեհի հուշարձանի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքային նախագծի փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքը կազմել է՝ 77299,7 հազ.դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

**Խմբի ղեկավար՝ Մ. Հունյան**
**Փորձագետներ՝ Լ. Մելիքյան, Վ. Գևորգյան, Ռ. Հերգնյան, Գ.Ղազարյան, Ա.Ասրիյան**